


Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիա համայնքի
ավագանու 2025 թվականի փետրվարի 25-ի
թիվ 4-Ն որոշման

Համայնքի 2025 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմվել է՝ համայնքի ղեկավարի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 25 փետրվարի 2025թ-ի թիվ 4-Ն որոշմամբ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	6
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ).....	13
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025Թ. ԾՐԱԳԻՐԸ 40ERROR! BOOKMARK NOT DEFINED.	
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ.....	43
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ.....	47

Ներածություն

2017 թվականի հունիսին «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի պահանջով ձևավորվեց Ամասիա համայնքը՝ իր մեջ ներառելով 9 բնակավայրեր, 20212-ին տեղի ունեցավ երկրորդ խոշորացումը, որի հետևանքով բնակավայրերի թիվը դարձավ 26: Համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, բնական և իրենցից պատմական մեծ արժեք ներկայացնող քարանձավներով, բազմաշերտ և գեղատեսիլ բնությամբ:

Համայնքի բնակչության 8159, որից 3923-ը, կամ 48,1%-ը կին, 4236-ը, կամ 51,9%-ը՝ տղամարդ:

Բնակչության տարիքային կազմը՝

- 0-3 տարեկանները 153 հոգի են, որոնցից 78-ը աղջիկներ են, 75-ը տղաներ:
- 4-6 տարեկան երեխաների թիվը՝ 391-ն է, որից աղջիկ՝ 138, տղա՝ 253:
- 7-18 տարեկանները 1412 հոգի են, որոնցից 617-ը աղջիկներ են, 795-ը տղաներ:
- 18-65 տարեկանները 5101-ն են, որից 2500-ը՝ կին, 2601-ը՝ տղամարդ,
- 65-ից բարձր տարեկանները 1102 հոգի են, որոնցից 590-ը կանայք են, 512-ը տղամարդիկ:
- Նպաստառուները 82-ն են, որից 56-ը սոցիալական նպաստ ստացողներ են:

Հատուկ կարիքներ ունեցող խմբերը՝

- Հաշմանդամություն ունեցող անձինք 274 են, որոնցից 185-ը կանայք են, 189-ը՝ տղամարդիկ: Մանկուց հաշմանդամներ 10, որից 6-ը տղա, 4-ը՝ աղջիկ:
- Կենսաթոշակառուները 665-ն են, որոնցից 359-ը կանայք են, 303-ը տղամարդիկ:
- Միայնակ կենսաթոշակառուները 56 հոգի են, որոնցից 56-ը կանայք են,:
- Միաձնող երեխաները 18-ն են, որոնցից 11-ը աղջիկ, 7-ը տղա:
- Նպաստառու ընտանիքները 316 են, որից 80-ը՝ կին գլխավորով ընտանիքներ են,
- Ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքները 17-ն են:
- Երեք և ավել երեխա ունեցող ընտանիքները՝ 53:
- Արցախից բռնի տեղահանված ընտանիքներ 19, 60 անձ, որից 24-ը կին:

Տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:¹

Համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգելու տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) տվյալ տարվա անելիքները,
- սահմանելու սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառելու համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկելու համախառն ռեսուրսները և բացահայտելու պակասուրդը (դեֆիցիտը),

¹ «Մեթոդական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀԸ, ՀՖՄ, 2017:

- համախմբելու համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները համայնքի հնգամյա զարացման ծրագրով (այսուհետև՝ ՀՀԶԾ) սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապելու նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնելու նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակելու տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

Մասնավորապես, 2025թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

- **Ամասիա բնակավայրի Հայասա թաղամասի խմելու ջրագծի կառուցում:** Ամասիա բնակավայրի Հայասա թաղամասը տասնյամյակներ շարունակ գրկված է խմելու ջրի մատակարարումից, որը հանգեցրել է այդ թաղամասի բնակչության արտահոսքին, օրինակ վերջին տասնյակում թաղամասը լքել են 76 մարդ: Թաղամասում կան լքված 7 տուն, որը, չնայած, Ամասիայի բնակֆոնդի սղությանը չի բնակեցվում, խմելու ջրի բացակայության պատճառով: Նույնիսկ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցները չեն համաձայնվել ապրել այդ թաղամասում: Այժմ թաղամասում ապրում են 74 մարդ, 18 ընտանիք, որոնցից կին 26, տղամարդ 25, երեխա 23, 1 միայնակ ծեր 18 ընտանիքն էլ զբաղվում են անասնապահությամբ, որը ջրի բացակայության պատճառով հնարավոր չի ընդլայնել, բառացի ջրի բացակայությունը ազդում է ոչ միայն մարդկանց կենցաղային, սանիտարական պայմանների վրա, այլ նաև եկամտի վրա:
Նախատեսվում է կառուցել 2200 մ երկարությամբ ջրագիծ, 51116,1 հազար դրամ արժողությամբ, որը հնարավորություն կտա ոչ միայն կանխել թաղամասի հետագա դատարկումը, այլև պայմաններ ստեղծել վերաբնակեցնելու այն: Այս ծրագիրն սկսվել է 2024թ-ին, կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթերը: Աշխատանքների կատարման համար կնքվել է Համատեղ գործունեության պայմանագիր «<Վալ Արտ>> ՄՊԸ-ի և «<Սոլիդ քոնսթրաքշն>> ՄՊԸ-ի հետ:
- **Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 25-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ:** Այս խնդիրը հրատապ լուծում է պահանջում, քանի որ խոսքը վերաբերվում է մեր երեխաների առողջությանը: Այս ճանապարհահատվածը անանցանելի է դառնում ձմռանը և անձրևների ժամանակ: Գոյացող ջրափոսերը շրջանցելու հնարավորություն չունենալով՝ բնակիչները պարզապես առանց ցեխոսվելու և թրջվելու չեն կարող այդ տարածքը անցնել: Իսկ երեխաները և ուսուցիչները ստիպված են դասերն անցկացնել թաց ոտքերով, որը չի կարող չանդրադառնալ երեխաների առողջության վրա: Այդ ճանապարհով օրական անցնում է 190 երեխա, 80 ուսանող, մոտ 30 ուսուցիչներ՝ հիմնականում կին, չհաշված համայնքի բնակիչները և էլ ցանցի և գազի աշխատակիցները: Ծրագրի արժեքը մոտ 88 մլն դրամ է: Իրականացվելու է սուբվենցիայի՝ 45% և համայնքի միջոցների հաշվին՝ 55%:
- **Ամասիա բնակավայրի Հարապլավական թաղամասում խաղահրապարակի կառուցում:** Այս թաղամասում և հարակից թաղամասում բնակվում է 275 մարդ, որից 91 կին, 86 տղամարդ, 98 երեխա: Թաղամասը բնակավայրի կենտրոնից հեռու է մոտ 2կմ, և այստեղ բնակվող երեխաները չեն կարող օգտվել բնակավայրի կենտրոնում տեղադրված խաղահրապարակից: Նախատեսվում է տեղադրել գրուցարան երեխաների, կանանց և տարեցների ժամանցի կազմակերպման համար: Ծրագրի ընդհանուր արժեքն է 13371,4 հազար դրամ: Այս ծրագրի իրականացումն սկսվել է 2024թ-ին: Ձեռք են բերվել սարավորումներ, սակայն շինարարական աշխատանքների ձգձգման պատճառով, չեն տեղադրվել:

Համայնքի 2025թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2025 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2025 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝ համայնքը բարեկարգ, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքներ արտադրող, բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	2.7	2
Համայնքի բյուջեի սեփական եկամուտները հազ. դրամ	121145,7	129519,0
Նոր ստեղծված աշխատատեղերի թիվը, որոնցից՝ հավանական է		3
Կին		1
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ), այդ թվում՝	8159	8159
Կին	3923	3923
Տղամարդ	4236	4236
Գործազրկության մակարդակը համայնքում (մարդ), որից՝	4748	4730
Կին	3240	3230
Տղամարդ	1508	1500
Գյուղատնտեսական ոլորտում զբաղվածները, որից՝	1617	1633
Կին	818	826
Տղամարդ	799	805
Ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածները, որից՝	832	840
Կին	396	420
Տղամարդ	436	420

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Բարելավել համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, %, որից	70	80
	Կին		35
	Տղամարդ		35
	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, % որից	1	4
	Կին		4
	Տղամարդ		4

	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %, որից՝	80	86
	Կին		86
	Տղամարդ		86
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում, քաղաքացիական պաշտպանություն			
Բնակչության անվտանգության ապահովման կազմակերպում	Տարհանման պլանի առկայություն, պատասխանատուների նշանակում,	այո	այո
	Փորձնական տարհանումների կազմակերպում	2	4
	Ազդանշանային համակարգերի առկայություն	այո	այո
	Վերանորոգված և կահավորված ապաստարանների առկայություն	ոչ	այո
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն			
Տարերային աղետներից, սելավներից, գարնանային հեղեղումներից, վթարային շենքերից բնակիչների պաշտպանության կազմակերպում, տուժած բնակիչներին մասնակի նյութական, աշխատանքային օգնության տրամադրում	Քարաթափության, սեյսմավտանգ տեղամասերի քարտեզների առկայություն, այո, ոչ	այո	այո
	Սելավատարների մաքրման աշխատանքների իրականացում աշնանը և գարնանը՝ օգտագործելով համայնքի տեխնիկան, հազ. դրամ	500,0	700,0
Ապաստարանների վերանորոգում և կահավորում	Վերանորոգված և կահավորված ապաստարանի առկայություն	ոչ	այո
	Ապաստարանների վերանորոգմանը և կահավորմանն ուղղված ֆինանսական միջոցներ, հազ. դրամ	0	4500,0
Ոլորտ 4. Գյուղատնտեսություն			
Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման ծախսեր	Գյուղատնտեսական տեխնիկաների թիվը	6	6
	Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման համար ստեղծված աշխատատեղերի թիվը	4	4
	Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման ծախսերը, հազար դրամ	2400,0	3600,0
	Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործումից ստացվող եկամուտ, հազ. դրամ	6700,0	6700,0

Հակակարկտային կայանների շահագործում	Կարկտահարությունից պաշտպանված ցանքատարածություններ, հա	942	942
	Հակակարկտային կայանների թվաքանակը, հատ	8	8
	Հակակարկտային կայանների շահագործման ծախսը, հազ. դրամ	820,0	820,0
Ոլորտ 5. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
Ստեղծել անասնաբուծության և բուսասանիտարիայի զարգացման համար նպաստավոր պայմաններ	Անասնաբուծական կետերի քանակը	4	4
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարելավել ներհամայնքային ճանապարհների վիճակը, ապահովել ճանապարհների անցանելիությունը տարվա բոլոր եղանակներին	Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների երկարությունը, կմ	8	10
	Ճանապարհների պահպանմանն ուղղված գումարի չափը, հազ. դրամ	4600,0	5700,0
	Ճանապարհների ձյան շերտից մաքրման աշխատանքների վրա ծախսվող գումարը	6300,0	7000,0
Փողոցների ասֆալտապատում	Ամսաիա բնակավայրի 25-րդ փողոցի ասֆալտապատում, հազ. դրամ	0	88000,0
Ոլորտ 7. Տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկանող /զարգացման բազմանպատակ ծրագրեր/			
2025 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 8. Առևտուր և ծառայություններ			
2025 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 9. Շրջակա միջավայրի պահպանություն			
Համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ, բոլոր 19 բնակավայրերում կազմակերպել կանոնավոր աղբահանություն	Աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը (հարցումների հիման վրա), % որից	30	55
	Կին		55
	Տղամարդ		55
	Աղբամանների թիվը	322	322
	Աղբավայրերի ցանկապատում, ցանկապատված աղբավայրերի թիվը		1

	Աղբահանության աշխատանքների մեջ ընդգրկված աշխատողների թիվը, որից Կին տղամարդ	4 1 3	6 2 4
	Աղբահան մեքենաների թիվը, հատ	2	2
	Աղբահանություն իրականացվող բնակավայրերի թիվը	19	19
Ոլորտ 10. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %, որից՝	58	60
	Կին		60
	Տղամարդ		60
	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, %, որից՝	50	70
	Կին		70
	Տղամարդ		70
	Հետիոտների և վարորդների բավարարվածության աստիճանը միջբնակավայրային ճանապարհների վիճակից, %, որից՝	30	35
	Կին		35
Տղամարդ		35	
Ոլորտ 11. Ջրամատակարարում			
Խմելու ջրագծի կառուցում	Ամասիա բնակավայրի Հայասա թաղամասի խմելու ջրագծի կառուցում մ	0	2200
	Ջրագծի կառուցման համար հատկացվող գումարը	0	51112,1
Ոլորտ 11. Հողօգտագործում			
2025 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել		-	-
Ոլորտ 12. Կրթություն			
Ապահովել համայնքի բնակիչներին նախադպրոցական	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	20	20

կրթության և արտադրողական դաստիարակության ծառայությունների մատուցումը	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, % որից՝ կին տղամարդ	70	70 70 70
	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	20	25
	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թիվը որից՝ աղջիկ տղա	40	50 37 13
	Գտաշեն բնակավայրում նախադպրոցական կրթության ապահովում 12 երեխայի համար, որից՝ աղջիկ տղա	12 9 3	12 9 3
Ոլորտ 13. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մշակութի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	60	60
	Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը նախորդ տարվա համեմատ, % որից կին տղամարդ	2	2 2 2
Խաղահրապարակների կառուցում	Ամասիա բնակավայրի Հարասլավական թաղամասում խաղահրապարակի կառուցում	0	1
	Խաղահրապարակից օգտվող երեխաների թիվը	0	98
Ոլորտ 14. Առողջապահություն			
2025 թվականի ընթացքում առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 15. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Համայնքում սպորտի զարգացման համար ստեղծել նախադրյալներ	Համայնքի ապահովվածությունը մարզադաշտերով և մարզադպրոցներով, %	10	10

	Մարզադպրոց հաճախող երեխաների թիվը, որից՝ աղջիկ տղա	80 35 45	100 40 60
	Մարզային միջոցառումներին ներգրավված տարեցների թիվը կին տղամարդ	6 2 4	6 2 4
Ամասիա բնակավայրում մարզասրահի պահպանում	Ամասիա բնակավայրում մարզասրահի առկայություն	ոչ	այո
	Մարզասրահ հաճախող բնակիչների թիվը, այդ թվում Կին տղամարդ		50 25 25
	Մարզասրահի հագեցվածությունը մարզագույքով, հազ. դրամ		11000,0
Ոլորտ 16. Սոցիալական պաշտպանություն			
Սոցիալ լրթական կենտրոն ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում	Սոցիալապես անապահով ընտանիքների հաշվառում և հոգեբանական աջակցության տրամադրում: Անհրաժեշտության դեպքում՝ կենցաղավարման հնտությունների ուսուցանում, ընտանիքների թիվը մարդ		5
	Երեխաների համար միջոցառումների, կինոդիտումների կազմակերպում, շաբաթական օր		1
Ոլորտ 17. Զբոսաշրջություն			
2025 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 18. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2025 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովում	Ավագանու արտագնա նիստերի թիվը	3	4
	Բնակիչների հետ հանդիպումների թիվը	4	5
	Անցկացված հանրային լուսմների թիվը	3	4
	Հանրային լուսմներին մասնակցած բնակիչների թիվը, այդ թվում	30	45
	Կին		22
	Տղամարդ		23
Լուսաբանված ավագանու նիստերի տեսակարար կշիռը բնդհանուրի մեջ	100	100	

Համայնքի 2025 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում	312830,7	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		312830,7	-
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
1.	Բնակչության անվտանգության ապահովման կազմակերպում	0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		0	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
1.	Տարերային աղետներից, սելավներից, գարնանային հեղեղումներից, վթարային շենքերից բնակիչների պաշտպանության կազմակերպում:	8500,0	Ընդհանուր համայնքային
2.	Ապաստարանների վերանորոգում և կահավորում	4500,0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		13000,0	-
Ոլորտ 4. Գյուղատնտեսություն			
1.	Ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի պահպանում և շահագործում	3600,0	Ընդհանուր համայնքային
2.	Հակակարկտային կայանների պահպանում և շահագործում	1720,0	Ամասիա, Գտաշեն, Մեղրաշատ, Ողջի, Բյուրակն, Բանդիվան, Արեգնաղեմ
Ընդամենը		5320,0	-
Ոլորտ 11. Ջրամատակարարում			
3.	Ամասիա բնակավայրի Հայասա թաղամասի խմելու ջրագծի կառուցում մ	51112,1	Ամասիա
Ոլորտ 5. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
	Անասնաբուծական կետերի պահպանում	300,0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		300,0	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	Համայնքի միջբնակավայրային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում	5700,0	Ընդհանուր համայնքային
2.	Համայնքի միջբնակավայրային ճանապարհների ձյան շերտից մաքրման աշխատանքների իրականացում	7000,0	Ընդհանուր համայնքային
3.	Ամասիա բնակավայրի 25-րդ փողոցի ասֆալտապատում, հազ. դրամ	88000,0	Ամասիա
4.	Բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռք բերում	45336,6	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		205286,6	-

Ոլորտ 8. Առևտուր և ծառայություններ			
1.	2025 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 9. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքի բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	10660,0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		10660,0	-
Ոլորտ 10. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	39934,7	Ամասիա
2.	Համայնքում գիշերային լուսավորության իրականացում	32092,7	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		72027,4	
Ոլորտ 11. Հողօգտագործում			
	2025 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 12. Կրթություն			
1.	Համայնքի բնակավայրերում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում	37045,0	Ամասիա, Ողջի, Գտաշեն
2.	Բնակավայրում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում	1310,0	Ամասիա
Ընդամենը		38355,0	-
Ոլորտ 13. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Բնակավայրերում գրադարանների գործունեության ապահովում	13175,0	Ամասիա, Բանդիվան, Ջրածոր
2.	Մշակութային միջոցառումների իրականացում	8378,5	ընդհանուր համայնքային
	Ամասիա բնակավայրի Հարասլավական թաղամասում խաղահրապարակի կառուցում	19000,0	Ամասիա
Ընդամենը		23749,0	-
Ոլորտ 15. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Համայնքի բնակավայրում մարզադպրոցների գործունեության ապահովում	16300,0	Ամասիա,
Ընդամենը		16300,0	-
Ոլորտ 16. Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	5320,0	Ընդհանուր համայնքային
2.	Ամասիայի սոցիալ-կրթական կենտրոն ՀՈԱԿ-ի պահպանման ծախսեր	8900,0	
Ընդամենը		14220,0	-
Ոլորտ 17. Զբոսաշրջություն			
	2025թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 18. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			

2024 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովում	0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը	-	-
Ընդհանուրը	495885,5	-

Աղյուսակ 4. SUՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր		44300,0	
2.	Ծաղկուտ բնակավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգում	800,0	Ծաղկուտ
3.	Զորակերտ բնակավայրի վարչական շենքի տանիքի վերանորոգում	1500,0	Զորակերտ
4.	Բերդաշեն բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգում	15000,0	Բերդաշեն
5.	Ալվար բնակավայրի վարչական շենքի մուտքի ընթացիկ վերանորոգում	800,0	Ալվար
6.	Զարիշատ բնակավայրի վարչական շենքի մուտքի կապիտալ վերանորոգում	1000,0	Զարիշատ
7.	Ողջի բնակավայրի համայնքային կենտրոնի ընթացիկ նորոգում	2000,0	Ողջի
8.	Բյուրակն համայնքի վարչական շենքի ընթացիկ նորոգում	2500,0	Բյուրակն
9.	Գտաշեն բնակավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգում	1200,0	Գտաշեն
10.	Արեգնադեմ բնակավայրի վարչական շենքի մուտքի վերանորոգում	1200,0	Արեգնադեմ
11.	Հողմիկ բնակավայրի վարչական շենքի ընթացիկ վերանորոգում	1500,0	Հողմիկ
12.	Բանդիվան բնակավայրի վարչական շենքի ընթացիկ վերանորոգում	8000,0	Բանդիվան
13.	Մեղրաշատ բնակավայրի գերեզմանների պարսպի վերանորոգում	10000,0	Մեղրաշատ
Ոլորտ 4. Զբամատակարարում			
1.	Գառնատիճ բնակավայրի 1000մ ջրագծի և ակունքի վերանորոգում	1500,0	Գառնատիճ
2	Զորակերտ բնակավայրի 400մ ջրագծի և ակունքի վերանորոգում		Զորակերտ
3	Արդենիս բնակավայրի 1500մ ջրագծի և ակունքի վերանորոգում		Արդենիս
4	Ծաղկուտ բնակավայրի 1500մ ջրագծի վերանորոգում		Ծաղկուտ
Ոլորտ 13. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1	Ամասիա բնակավայրի Հարասլավական թաղամասում խաղահրապարակի կառուցում	19000,0	Ամասիա

Ընդհանուրը	128864,2	
------------	----------	--

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ Բարելավել համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 90% ✓ Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, 1% ✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 16,5% ✓ ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, 90%				
Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ Ապահովել համայնքի աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավում, 15%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը, 90 2. Համայնքի ենթակայության կազմակերպությունների թիվը, 4 3. Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, 1%	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություն	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն

	<p>4. Համայնքի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 273 օր</p> <p>5. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը, այո</p> <p>6. Դռնոթ կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերի թիվը՝ 1</p> <p>7. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 2 %-ով</p> <p>8. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը՝ 80%</p> <p>9. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 4 օր</p>	ներ և խմբեր, բնակիչներ			
<p>Միջոցառումներ</p> <p>1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում</p> <p>2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկման վճարների կատարում</p> <p>3. Համայնքապետարանի և բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի և գույքի ընթացիկ նորոգման, նոր գույքի ձեռք բերման աշխատանքների իրականացում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <p>1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 312830,0 հազ. դրամ</p> <p>2. Համայնքի աշխատակազմի աշխատողներ՝ 84</p> <p>3. Համայնքի անշարժ գույքի, հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 2</p> <p>4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք</p> <p>5. Վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքեր և գույք</p> <p>6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք՝ http://amasia.am</p> <p>7. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր 2</p>			
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում, քաղաքացիական պաշտպանություն					
<p>Բնակչության անվտանգության ապահովման կազմակերպում</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</p> <p>Բնակիչները, որոշ չափով, պաշտպանված են, գիտեն ինչպես վարվել տագնապների դեպքում: Համայնքն ունի անհրաժեշտ հմտություններ և ռեսուրսներ բնակչությանը տարհանելու կամ ապաստանելու համար:</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2025թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1 Բնակչության անվտանգության</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <p>1, Տարհանման պլանի առկայություն, 2, վերապատրաստում անցած մասնագետներ</p>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2025թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների</p>

ապահովման կազմակերպում	3, Շչակների առկայություն համայնքի 7 բնակավայրերում	հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	վարչական ղեկավարներ		առկայություն
Միջոցառումներ 4. Աշխատակազմի հետագա վերապատրաստում, 5. Փորձնական տազնապների անցկացում 6. Ապաստարանների կահավորում 7. Ապաստարանի վերանորոգում և կահավորում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1, Ապաստարանի համար շենքային պայմաններ 2, Համագործակցություն պետական մարմինների հետ			
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն					
Տարերային աղետներից, սելավներից, զարնանային հեղեղումներից, վթարային շենքերից բնակիչների պաշտպանության կազմակերպում, տուժած բնակիչներին մասնակի նյութական, աշխատանքային օգնության տրամադրում	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ 1, Բնակիչները և համյքի աշխատակիցները գիտեն ինչ միջոցառումներ ձեռնարկեն արտակարգ իրավիճակներում 2, Առկա է անհրաժեշտ նյութական բազա, բնակչությանն անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար 3, Ստեղծված են պայմաններ կանխատեսելի աղետները կանխելու համար	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Բնակչության անվտանգության ապահովման կազմակերպում	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1, Տարհանման պլանի առկայություն, 2, վերապատրաստում անցած աշխատակազմ և համայնքի բնակիչներ 3, Արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ նյութերի առկայություն 4, տուժված բնակիչներին օգնության տրամադրում	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն

Միջոցառումներ 1. Համայնքի աշխատակազմի և բնակիչների հետագա վերապատրաստումներ 2. Փորձնական իրավիճակների ստեղծում և միջոցառումների անցկացում համայնքի աշխատակազմի և բնակիչների մասնակցությամբ 3. Սելավատարների մաքրում աշնանը և գարնանը համայնքի տեխնիկայով և համայնքի աշխատուժով 4. Քարաթափության, սեյսմավտանգ տեղամասերի քարտեզների կազմում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1, Համայնքի բյուջեի միջոցներ 3700,0 հազ, դրամ 2, Համագործակցություն պետական մարմինների հետ 3, Սելավատարների մաքրման համար անհրաժեշտ տեխնիկա			
Ոլորտ 4. Գյուղատնտեսություն					
Ոլորտային նպատակ Ստեղծել գյուղատնտեսության զարգացման համար նպաստավոր պայմաններ			Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Անասնապահության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, 2% ✓ Հողագործության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, 1%		
Ծրագիր 1. Հակակարկտային կայանների պահպանման աշխատանքների իրականացում					
Ծրագրի նպատակ Խթանել հողագործության զարգացմանը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Հացահատիկային մշակաբույսերի բերքատվության մակարդակի բարձրացում, 3%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք Հողագործության զարգացման համար առկա են բավարար պայմաններ	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Գյուղատնտեսությամբ զբաղվածների թվի տեսակարար կշիռը համայնքի բնակչության ընդհանուր թվի մեջ, 45% ✓ Գյուղատնտեսության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, 1% ✓ Հակակարկտային կայանի առկայություն, այո	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

<p>Միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Հակակարկտային կայանների շահագործում 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Հակակարկտային 8 կայաններ : ✓ Աշխատակազմում առկա վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր 2 ✓ Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողների թիվը 3 ✓ Համայնքի հողային հաշվեկշիռ ✓ Հակակարկտային կայանի ստեղծման համար անհրաժեշտ տարածքների առկայություն, այո ✓ Գույքի կառավարման պլան
---	--

Ծրագիր 2. Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործում

<p>Ծրագրի նպատակ Ավելացնել մշակովի ցանքատարածությունները</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսի մեջ, 30% 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>		<p>2025թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջանկյալ արդյունք Ցանքատարածությունների ավելացման համար առկա է բավարար քանակությամբ գյուղ. տեխնիկա:</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գյուղատնտեսությամբ զբաղվածների թվի տեսակարար կշիռը համայնքի բնակչության ընդհանուր թվի մեջ, 45% ✓ Գյուղատնտեսության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, 2% ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, տարի ✓ Համայնքում գյուղատնտեսական տեխնիկայի միավորների քանակը 4 ✓ Հացահատիկի անկորուստ հավաքում 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>		<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p>Միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գյուղատնտեսական տեխնիկայի պահպանում և շահագործում 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր, 3600,0 հազ. դրամ ✓ Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողների թիվը 5 ✓ Գույքի կառավարման պլան
---	--

Ոլորտ 5. Անասնաբուժություն և բուսասանիտարիա					
Ոլորտային նպատակ Ստեղծել անասնապահության զարգացման համար նպաստավոր պայմաններ		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> ✓ Անասնապահության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, 2% ✓ Կենդանիների անկման տոկոսի նվազում ✓ Հիվանդ կենդանիներին ժամանակին անասնաբուժական օգնության ցուցաբերում ✓ Կենդանիներին անհրաժեշտ դեղամիջոցների առկայության ապահովում 			
Ոլորտ 6. Տրանսպորտ					
Ոլորտային նպատակ Ներհամայնքային ճանապարհների անցանելի պահելը և վիճակի բարելավում:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների երկարությունը 42 կմ ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, 30% 			
Ծրագիր 1. Համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում					
Ծրագրի նպատակ Ապահովել ներհամայնքային ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցումը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ <ul style="list-style-type: none"> ✓ Ներհամայնքային ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակի բարելավում, 10 % ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, տեղադրման, շահագործման և պահպանման ծառայությունից, 20% ✓ Տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերի (վառելիքի և ամորտիզացիոն ծախսերի) խնայողությունը, 10% 	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

<p>Միջանկյալ արդյունք 1 Բարեկարգվել են ներհամայնքային ճանապարհները</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի կենտրոնից բնակավայրեր տանող ճանապարհները պահել անցանելի վիճակում ✓ Հանդամիջյան ճանապարհների հարթեցում և փոսապայտում 5 կմ ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների երկարությունը 9 կմ 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>			<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքների իրականացում 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 8937,2 հազար դրամ ✓ Ձմռանը ներհամայնքային ճանապարհների ձյան շերտից մաքրում, մշտական անցանելի վիճակում պահում ✓ Համայնքապետարանից ներհամայնքային ճանապարհների պահպանման համար շինարարական կազմակերպությունների հետ պայմանագրի առկայություն: 			
<p>Ծրագիր 2. Փողոցների ասֆալտապատում</p>					
<p>Ծրագիր 2. Ամասիա բնակավայրի 25-րդ փողոցի ասֆալտապատում,</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</p> <ul style="list-style-type: none"> ✓ տրանսպորտից օգտվողների և հետիոտների տեղաշարժը հարմարավետ դարձնել ✓ դպրոց հաճախող երեխաների, ուսուցիչների, Ամասիայի արհեստագործական ուսումնարանի սաների և աշխատակիցներ, Ամասիայի էլեկտրական ցանցերի աշխատակիցների և այդ հիմնարկություններ հաճախող մարդիկ ունեն հնարավորություն հարմարավետ ձևով այցելելու այդ հիմարկներ: 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Թաղամասի բնակիչներ, համայնքի ղեկավար, ավագանի</p>	<p>2025թ. Հունիս դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p>Միջանկյալ արդյունք 1 1 բարելավվել են 3.</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Դպրոց, ուսումնարան և այլ հիմնարկներ հաճախելու ժամանակի կրճատում 30 տոկոսով: ✓ Բնակիչների համար ստեղծված են տրանսպորտից օգտվելու հարմարավետ պայմաններ ✓ Համայնքը դրաձնել հրապուրիչ հատկապես երիտասարդների համար 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>			<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ճանապարհի ասֆալտապատման համար նախագծային աշխատանքների իրականացում ✓ Ասֆալտապատման աշխատանքների իրականացում 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 48400.0 հազար դրամ ✓ Սուբվենցիոն միջոցների ներգրավում 39600,0 հազ. դրամ ✓ 			
<p>Ոլորտ 8. Առևտուր և ծառայություններ</p>					
<p>2025 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում</p>					
<p>Ոլորտ 9. Շրջակա միջավայրի պահպանություն</p>					
<p>Ոլորտային նպատակ Համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ, 19 բնակավայրերում կազմակերպել կանոնավոր աղբահանություն</p>		<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը (հարցումների հիման վրա), 10% ✓ Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացող ամբողջ աղբի քանակի մեջ, 80% 			
<p>Ծրագիր 1. Համայնքի 19 բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում</p>					
<p>Ծրագրի նպատակ Համայնքի բնակավայրերը դարձնել մաքուր և բարեկարգ</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Մաքուր բնակավայրեր, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն, այո</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2025թ. հունվար-</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p>Միջանկյալ արդյունք 1 Մաքուր բնակավայրեր, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը՝ 5 ✓ Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), 2 օր ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունից, 80 % 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բնակավայրերում կանոնավոր աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպում 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 10660,0 հազ. դրամ ✓ Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը՝ 6 ✓ Աղբատար մեքենաների թիվը 2 ✓ Աղբամանների թիվը 352 			
<p>Ծրագիր 2. Հայասա թաղամասում խմելու ջրագծի կառուցում</p>					
<p>Ծրագրի նպատակ Ամասիա համայնքի Հայասա թաղամասում խմելու ջրագծի կառուցում</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Հայասա թաղամասում ապահովել խմելու ջրի առկայությունը ✓ Կանխել թաղամասի հետագա դատարկվումը ✓ Լքված տների վերաբնակեցում 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Թաղամասի բնակիչներ, համայնքի ղեկավար, ավագանի</p>	<p>2025թ. Հունիս</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p>Միջանկյալ արդյունք 1 1 բարելավվել են թաղամասի բնակիչների կենցաղային, սանիտարական պայմանները</p> <p>4. Նպաստավոր պայմաններ են ստեղծվել անասնապահության զարգացման համար</p> <p>5. Ավելացել են բնակիչների եկամուտները</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Հայասա թաղամասի բնակիչները ապահովված են խմելու ջրով ✓ Կասեցվել է բնակիչների արտագաղթը ✓ Բարելավվել է բնակիչների կենցաղային, սանիտարահիգիենի պայմանները ✓ 7 լքված տները վերաբնակեցվել են ✓ Ավելացել է անասնազլխաքանակը, ՄԵԱ 200-ից կդառնա 900 իսկ ԽԵԱ թվաքանակը 180-ից դարձել է 450 ✓ Ծրագրի իրականացման ժամկետը՝ 12 ամիս: ✓ Լքված տների վերաբնակեցում 2 տարի 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>		<p>դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ջրագծի կառուցման համար նախագծային աշխատանքների իրականացում ✓ Ջրագծի կառուցման աշխատանքների իրականացում 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 15335.0 հազար դրամ ✓ Մուբվենցիոն միջոցների ներգրավում 35781,3 հազ. դրամ ✓ 			
<p>Ոլորտ 10. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</p>					
<p>Ոլորտային նպատակ Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը</p>			<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, 58% ✓ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, 40% ✓ Ճանապարհների պահպանմանն ուղղված բյուջետային միջոցներ, 9000,0 հազ, դրամ 		
<p>Ծրագիր 1 Բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի վերանորոգման աշխատանքների իրականացում</p>					

<p>Ծրագրի նպատակ Բնակավայրում ունենալ բարեկարգ բակեր և վերանորոգված տանիքներով ու շքամուտքերով բազմաբնակարան շենքեր</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Նորոգված տանիքներ ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, 15% ✓ Նորոգված շքամուտքեր ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, 15% ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը բակերի բարեկարգման աշխատանքներից, 80% 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար</p>	<p>2025թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1 Մեծացել է բնակավայրի գրավչությունը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բազմաբնակարան շենքերի թիվը, որոնց տանիքները վերանորոգվել են ✓ Բազմաբնակարան շենքերի թիվը, որոնց շքամուտքերը վերանորոգվել են 6 ✓ Զբոսայգու վիճակը, բավարար ✓ Զբոսայգու բարեկարգման տևողությունը, 20 օր ✓ Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման տևողությունը 80 օր 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար</p>	<p>2025թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p>Միջոցառումներ</p> <p>1. Բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի վերանորոգման աշխատանքների իրականացում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 46605,4 հազար դրամ ✓ Բազմաբնակարան շենքերի թիվը, որոնց տանիքները ենթակա են կապիտալ նորոգման 2 ✓ Բազմաբնակարան շենքերի թիվը, որոնց շքամուտքերը ենթակա են վերանորոգման 10 			
<p>Ծրագիր 2. Համայնքում գիշերային լուսավորության իրականացում</p>					
<p>Ծրագրի նպատակ Սպահովել համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորվածությունը</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորվող տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, 10% 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2025թ. հունվար-</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p>Միջանկյալ արդյունք 1 Ամասիա, Արեգնադեմ, Ալվար, Արդենիս, Ադվորիկ, Բանդիվան, Բերդաշեն, Բյուրակն, Գտաշեն, Գառնառիճ, Զարիշատ, Զորակերտ, Հովտուն, Հոդմիկ, Մեղրաշատ, Ծաղկուտ, Ծաղիկ, Ողջի և Զրաձոր բնակավայրերի փողոցները լուսավոր են և անվտանգ</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Փողոցների արտաքին լուսավորության հենասյուների թիվը 220 հատ ✓ Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 85% ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 3 ժամ ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը 4 ժամ 	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>		<p>դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p>Միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Կազմակերպել գնման ընթացակարգեր գիշերային լուսավորության համար անհրաժեշտ նյութերի գնման համար: ✓ Գնման ընթացակարգերի արդյունքում կնքել պայմանագրեր և իրականացնել գնումներ: ✓ Իրականացնել վերահսկողություն գիշերային լուսավորության անխափան աշխատանքի համար: 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, 37092,1 հազ. դրամ ✓ Համայնքապետարանից՝ փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը՝ 2 ✓ Առկա լուսավորության համակարգի հենասյուների թիվը 220 ✓ Առկա դրոսեւների թիվը 30 ✓ Առկա մեկնարկիչների թիվը 42 			
<p>Ոլորտ 11. Հողօգտագործում</p>					
<p>2024 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում</p>					
<p>Ոլորտ 12. Կրթություն</p>					
